

**ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ
ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԱՐՈՒՑԹՈՎ***

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ՍՈՒՋՅԱՆ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի¹ 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնակից պետությունները ձգտում են նպաստել մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող երեխաների նկատմամբ (...) անհրաժեշտության և ցանկալիության դեպքում (...) միջոցներ ձեռնարկել՝ առանց դատաքննության դիմելու, մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանման պայմանով»: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով հաստատված՝ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ) սահմանում են, որ անչափահաս իրավախախտների գործերի քննության ժամանակ հնարավորության սահմաններում պետք է ձեռնպահ մնալ դատական իշխանության իրավասու մարմինների կողմից գործի պաշտոնական քննությունից, և որ ոստիկանությունը, դատախազությունը կամ անչափահասների գործերի քննություն իրականացնող մյուս մարմինները պետք է լիազորված լինեն այդպիսի գործերի կապակցությամբ որոշում կայացնելու սեփական հայեցողությամբ, առանց այդ գործերով պաշտոնական լսումների՝ համապատասխան իրավական համակարգում այդ նպատակով սահմանված չափանիշների, ինչպես նաև նույն միջազգային-իրավական փաստաթղթում ամրագրված սկզբունքների համաձայն: Ի ապահովումն նշված պահանջի կատարման՝ այդ նույն կանոնները անհրաժեշտ են համարում անչափահասների գործերի քննության ընթացքում հայեցողական որոշումներին նպաստելու նպատակով ջանքեր գործադրել համայնքային ծրագրեր առաջարկելու ուղղությամբ, ինչպիսիք են՝ ժամանակավոր հսկողությունը, տուժողին պատճառված վնասի հարթումը կամ փոխհատուցումը²: Անչափահասներին մեղսագրվող հանցագործություններ-

* Հոդվածը պատրաստվել է 18T-5E230՝ «Անչափահասների հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմատիկ հայտի շրջանակում:

¹ Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/25 բանաձևով ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում (ՀՀ-ի համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 22.07.1993 թ.), <https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503>

² Տե՛ս Պեկինյան կանոնների 11.1 և 11.2-րդ կետեր, կից մեկնաբանություններով

րի վերաբերյալ քրեական գործերի լուծման արտադատական մեխանիզմներ նախատեսելու պահանջ ամրագրում են նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 45/110 բանաձևով հաստատված՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ)³, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(87)20 հանձնարարականը:

Վերոշարադրյալ միջազգային-իրավական կարգավորումների վերլուծությունից բխում է, որ դրանք պահանջում են ներպետական օրենսդրության մեջ անչափահասների վերաբերյալ գործերի քննության այլընտրանքային եղանակների, այդ թվում՝ հայեցողական քրեական հետապնդման դատավարական ընթացակարգերի նախատեսում, որոնք հնարավորություն կտան անչափահասին հնարավորինս զերծ պահելու գործի քննության անհարկի ձգձգումներից՝ մեղմելով նաև դատավարության բացասական ազդեցությունը վերջինիս վրա:

Գործող քրեադատավարական կարգավորումները թեև նախատեսում են հայեցողական քրեական հետապնդման ինստիտուտը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդված), սակայն այն հավասարապես կիրառելի է թե՛ չափահասներին, թե՛ անչափահասներին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով, և քրեադատավարական որևէ առանձնահատկություն անչափահասների վերաբերյալ գործերով նախատեսված չէ: Ինչ վերաբերում է անչափահասների քրեական պատասխանատվության այլընտրանքային եղանակներին, իբրև այդպիսին թերևս կարելի է նշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 443-րդ հոդվածում ամրագրված այն օրենսդրական դրույթը, որ դատարանը, դատավճիռ կայացնելիս հանգելով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին ազատել պատժից և նրա նկատմամբ կիրառել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Վերոշարադրյալ դրույթը, սակայն, ոչ թե նախատեսում է այլընտրանքային դատավարական ընթացակարգեր, այլ բովանդակային առումով կրկնում է ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ և 91-րդ հոդվածներով նախատեսված՝ անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու նյութական նորմը, դեռ ավելին նյութական օրենսդրությունն այս ինստիտուտի կիսուման հիմքերի առումով ավելի մանրամասն լուծումներ է նախատեսում⁴: Ընդ որում, եթե քրեական օրենսդրությունը

հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18505>, <https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/beijingrules.pdf>

³ Տե՛ս Տոկիոյի կանոնների 2-րդ բաժնի 5.1-րդ կետը, հասանելի է՝ <https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/tokyorules.pdf>

⁴ Խոսքը ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի մասին է, համաձայն որի՝ «Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափա-

նախատեսում է նշված միջոցների կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին նորմ, ապա Օրենսգրքի վկայակոչված նորմում նշվում է պատժից ազատելու մասին: Դա իր հերթին ենթադրում է, որ անչափահասի վերաբերյալ քրեական գործն անցնելու է դատավարական բոլոր հիմնական փուլերով՝ առանց որևէ այլընտրանքային լուծման, որի ավարտին, սակայն, անձը կարող է ազատվել միայն պատժից: Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ կարծում ենք՝ իրավաչափ է հայրենական դատավարական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ այս առնչությամբ քրեադատավարական գործող կարգավորումները համահունչ չեն անչափահասների գործերով այլընտրանքային արդարադատության վերաբերյալ հիշատակված միջազգային փաստաթղթերով նախատեսված պահանջներին⁵:

Այս առումով սկզբունքորեն նոր լուծումներ են նախատեսված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նաև՝ Նախագիծ): Այսպես, Նախագծի 416-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե մինչդատական վարույթում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի քննության ընթացքում պարզվում է, որ նախկինում հանցանք չկատարած անչափահաս մեղադրյալի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու, ապա հսկող դատախազը, քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին և հարուցում է անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդություն, որը վարույթի նյութերի հետ միասին հանձնում է դատարանին:

2. Հսկող դատախազն իրավասու է անչափահաս մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել առանց դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու, ինչպես նաև նրա նկատմամբ չհարուցել քրեական հետապնդում, եթե առկա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք[ով] (...) նախատեսված [գործուն գղջալու] բոլոր պայմանները: (...):»:

Նախագծի այս կարգավորումներից բխում է, որ այն նախատեսում է անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով

հար դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ»:

⁵ Տե՛ս **Ն. Խ. Աղաբաբյան**, Անչափահասների գործերով վարույթի իրավական և տեսական հիմքերի զարգացումը ՀՀ քրեական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2019, **Ս. Ռ. Մարաբաբյան**, Անչափահասի նկատմամբ դաստիարակչական կամ պատժիչ բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու առանձնահատկություններն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի/ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1), 2018, ԵՊՀ հրատ., էջ 340-341:

քրեական հետապնդումը դադարեցնելու երկու ինքնուրույն մեխանիզմ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ և առանց նման միջոցներ կիրառելու: Նախքան կոնկրետ օրենսդրական կարգավորումները քննարկելը պետք է փաստել, որ Նախագծում առկա այս ինստիտուտները ներպետական օրենսդրություն և հետագայում նաև պրակտիկա անչափահասների վերաբերյալ գործերի քննության այլընտրանքային տարրեր ներմուծելու կարևոր քայլ են:

Տեսության մեջ քննարկվել է նախ և առաջ այն հարցը, թե բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է, թե՛ իրավունքը: Եվ այս առնչությամբ մոտեցումները խիստ հակասական են⁶:

Մեր կարծիքով՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը հայեցողական քրեական հետապնդման տեսակ է: Թեև Նախագծի վկայակոչված նորմի վերլուծությունից բխում է, որ այն նախատեսում է համապատասխան հիմքերի և պայմանների առկայության պարագայում նշված ինստիտուտի կիրառման պարտադիր օրենսդրական պահանջ, սակայն այնքանով, որքանով առանց քրեական պատասխանատվության ենթարկելու անչափահասի ուղղման հնարավորությունը պետք է գնահատի հսկող դատախազը, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը և համապատասխան միջնորդությամբ դատարան դիմելը վերջինիս հայեցողական լիազորությունն է:

Նախագծի 416-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ հսկող դատախազը քննիչի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու, անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

- հանցանք կատարած անձը անչափահաս է, որի տասնութ տարին չի լրացել մեղադրանք ներկայացնելու պահին⁷,

⁶ Տե՛ս **Кузнецова Н.** Частичное прекращение уголовного дела при множественности преступлений // Законность. 2001, № 3, էջ 31, **Сверчков В. В.** Актуальные вопросы освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием // Государство и право. 1999, № 12, էջ 56, **Лянго Л. Н.** Проблемы прекращения уголовного дела в связи с примирением с потерпевшим: Дис. ... канд. юрид. наук. Волгоград, 2000, էջ 105-106, **Авалиани К. А.** Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, дис. ... канд. юрид. наук. Кемерово, 2009, էջ 162:

⁷ Այն դիտարկումը, որ այս ինստիտուտն իրավաչափորեն կարող է կիրառվել ոչ միայն անչափահաս տարիքում հանցանք կատարած, այլ նաև վարույթի ընթացքում դեռևս 18 տարին չլրացած անձի նկատմամբ, բխում է Նախագծի 409-րդ հոդվածի ընդհանուր բնույթի այն կարգավորումից, որ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ Նախագծի 50-րդ գլխում ամրագրված դրույթները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթներով, որոնց տասնութ տարին չի լրացել ձեռքարկման կամ մեղադրանք ներկայացնելու պահին:

- անչափահասը նախկինում հանցանք չի կատարել,
 - անչափահասը կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք: Տեսական գրականության մեջ քննարկվում է նաև հանրային բարձր վտանգավորություն չներկայացնող որոշ ծանր հանցագործություններով (սեփականության դեմ ուղղված ծանր հանցագործություններ, ծանր հանցագործություններ, որոնք չեն հանգեցրել մարդկային կորուստների կամ այլ ծանր հետևանքների) ևս այս ինստիտուտի կիրառման հնարավորությունը կամ, առհասարակ, հանցագործության ծանրության աստիճանի վերաբերյալ օրենսդրական պահանջի բացառումը: Որոշ տեսաբաններ այս դեպքում ևս քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը հնարավոր են համարում այն պատճառաբանությամբ, որ հանցավորի անձնային առանձնահատկությունները և քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը կարող են վկայել, որ անչափահասը հնարավոր է ուղղվի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով⁸: Հակառակ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անչափահասի անձնային առանձնահատկությունների ուժով դեպքերի ճնշող մասի դեպքում վերջինիս ուղղումը չի կարող իրականացվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով⁹: Ընդհանուր առմամբ իրավաչափ համարելով այն դիտարկումը, որ առավել մեծ է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ ուղղվելու հավանականությունը, այդուհանդերձ կարծում ենք, պետք է նախատեսել նաև բացառիկ դեպքերում ծանր հանցագործություն կատարած անչափահասներին ևս այս մեխանիզմի գործադրմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն: Նշված դիրքորոշումը թերևս կարելի է հիմնավորել այն բանով, որ, որոշ դեպքերում, օրինակ, սեփականության դեմ ուղղված մի շարք հանցագործությունների որակումը որպես միջին ծանրության կամ ծանր հանցանք կախված է սուկ հափշտակության չափից: Եվ կարող է առաջանալ ոչ իրավաչափ այնպիսի իրավիճակ, երբ հափշտակության չափի չնչին տարբերությամբ պայմանավորված՝ բացառվի միջազգային-իրավական չափանիշներին խիստ համահունչ այս ինստիտուտի կիրառումը: Կարծում ենք այս դեպքում վարույթն իրականացնող մարմինը, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, պետք է գնահատի դաստիարակ-

⁸ Տե՛ս Աликперов Х. Д., Курбанова К. Ш. УК РФ и некоторые проблемы освобождения от уголовной ответственности/Государство и право. 2000, № 1, էջ 56, Косова С. А. Прекращение уголовного дела в отношении несовершеннолетнего в связи с применением принудительных мер воспитательного воздействия, Дис. канд. юрид. наук. Омск, 2002, էջ 105, Исакова Т. В. Производство по уголовным делам в отношении несовершеннолетних, Дис. канд. юрид. наук. Иркутск, 2009, էջ 150:

⁹ Տե՛ս Авалиани К. А., նշվ. աշխ., էջ 167:

չական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ անչափահասի ուղղվելու հնարավորությունը:

Անչափահասի ուղղումը հնարավոր է առանց նրան քրեական պատասխանատվության ենթարկելու. ինչպես նշվում է տեսության մեջ: Անչափահասի ուղղումը ենթադրում է վերացնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ վերջինիս բացասական որակները, որոնց ազդեցությամբ կատարվել է հանցանքը, ձևավորել հարգալից վերաբերմունք օրենքի, այլոց իրավունքների և շահերի նկատմամբ՝ բացառելով անչափահասի կողմից այլ հանցանքների կատարումը: Անչափահասի ուղղման հնարավորությունը փաստելը որոշակի առումով ռիսկային է, քանի որ դա կապված է վերջինիս հետագա վարքագիծը կանխատեսելու հետ: Եվ այդ կանխատեսումների հավաստիության աստիճանը պայմանավորված է այն բանով, թե որքան մանրակրկիտ են վերլուծված գործի բոլոր հանգամանքները և անչափահասի անձի վերաբերյալ տվյալները¹⁰: Ինչպես արդեն նշել ենք, ի տարբերություն քննարկվող ինստիտուտի կիրառման մյուս հիմքերի, անչափահասի ուղղվելու հանգամանքը ենթադրում է դատախազի կողմից որոշակի գնահատողական գործունեության իրականացում: Սակայն ո՛չ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը և ո՛չ էլ Նախագիծը չեն հստակեցնում, թե ինչ հանգամանքներ պետք է հաշվի առնի վարույթն իրականացնող մարմինը՝ գնահատելու համար դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ անչափահասի ուղղման հնարավորությունը:

Տեսության մեջ իբրև այդպիսին առանձնացվում են՝

- 1) հանցանքի կատարման շարժառիթները.
- 2) հանցանքի կատարման մեջ երկրորդական դերը.
- 3) նախքան հանցանք կատարելը անչափահասի դրական վարքագիծը (դատվածության բացակայությունը, ուսումը, աշխատանքային գործունեությունը, դրական կենսաձևը, այլ անձանց հետ լավ փոխհարաբերությունները և այլն).
- 4) անչափահասի դրական հետհանցավոր վարքագիծը. մեղքի ընդունումը, հանցանքի կատարման համար զղջալը, մեղայականով ներկայանալը, արարքի հակաիրավական բնույթը գիտակցելը, պատճառված վնասը կամավոր հատուցելը կամ այլ կերպ հարթելը, տուժողի հետ հաշտվելը¹¹:

Որոշ տեսաբաններ անչափահասի ուղղվելու և առանց հասարակությունից մեկուսացնելու վերադաստիարակման հնարավորության

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 167-168:

¹¹ Տե՛ս **Авалиани К. А.**, նշվ. աշխ., էջ 169: Իհարկե, այս վերջին պայմանի դեպքում կարող է խնդիր առաջանալ սահմանազատելու քննարկվող ինստիտուտը գործունե զղջալու և տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու դատավարական կառուցակարգերի հետ:

մասին խոսելիս առանձնացնում են սուբյեկտիվ հանգամանքներ՝ անչափահասի անձի և կատարած արարքի վերաբերյալ տվյալներ, և օբյեկտիվ հանգամանքներ՝ ընտանեկան և կենցաղային առողջ միջավայրի, ուսումնական և աշխատանքային կոլեկտիվի առկայություն, և այլն¹²: Ն. Վ. Ուզովնիկովան առանձնացնում է անչափահասի ուղղվելու հնարավորությունը գնահատելու չորս խումբ պայմաններ՝ մեղքի ապացուցվածությունը, այն հանգամանքների ապացուցված լինելը, որոնք հաստատում են առանց պատժի կիրառման անչափահասի ուղղվելու հնարավորությունը, այն միջավայրը պարզելը, որտեղ վերադառնալու է անչափահասը հարկադրանքի միջոցների կիրառումից հետո և մասնագետների (հոգեբանների, մանկավարժների) կարծիքը անչափահասի անձի և վերջինիս ուղղվելու հնարավորության մասին¹³: Որոշ տեսաբաններ այս առնչությամբ կարևորում են քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները¹⁴:

Չնայած տեսության մեջ առաջարկվող լուծումներին՝ կարծում ենք՝ նպատակահարմար չէ գնահատման ենթակա նման հանգամանքների որոշակի, առավել ևս սպառիչ ցանկ նախատեսելը: Նման դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործի արդարացի քննության դատավարական սկզբունքի՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջը ենթադրում է առհասարակ գործով ապացուցման առարկան կազմող, իսկ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով, նաև առանձնահատուկ որոշ հանգամանքներ (Օրենսգրքի 440-րդ հոդված):

Ինչպես իրավաչափորեն նշվում է տեսության մեջ, անչափահասի ուղղվելու հնարավորությունը պարզելու համար պետք է մանրամասն գնահատել գործով ապացուցման առարկան կազմող և պարզման ենթակա այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են երեխայի կյանքի և դաստիարակության պայմանները, անձնային առանձնահատկությունները, հանցանքի կատարման պատճառներն ու նպաստող պայմանները: Իսկ այդ հանգամանքները կարող են պարզվել վկաների (ծնողների, հարևանների, մանկավարժների, ընկերների և այլոց) ցուցմունքներով, տարբեր բնութագրերով: Ընդ որում, տեսության մեջ կարևորվում է նաև հոգեբանի կարծիքը նշված միջոցի կիրառման արդյունավետության

¹² См. у **Николюк В. В.** Применение отсрочки исполнения приговора по делам о преступлениях несовершеннолетних. Омск: Ом. ВШМ, 1982, էջ 34:

¹³ См. у **Угольникова Н. В.** Прекращение уголовного дела в отношении несовершеннолетнего с применением принудительных мер воспитательного воздействия: дис. ... канд. юрид. наук. М., 2000, էջ 92:

¹⁴ См. у **Романовский М. Э.** Смягчающие и отягчающие обстоятельства как элемент основания освобождения от уголовной ответственности // Уголовно-процессуальные и криминалистические проблемы правоприменительной деятельности: Сб. науч. Статей. Омск: Омская ВШ милиции, 1989, էջ 66-73, Уголовная ответственность несовершеннолетних: Науч.- практ.пособ. / Отв. ред. В. П. Кашепов. М.: Юрид. лит, 1999, էջ 110:

զնահատման և կոնկրետ տեսակի ընտրության հարցում¹⁵:

Տեսության մեջ քննարկվել է նաև անչափահասի կողմից մեղքը չընդունելու պարագայում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը: Առանձին դատավարագետների կարծիքով՝ այս ինստիտուտի կիրառումը հնարավոր է բացառապես անչափահասի կողմից իր մեղքը ընդունելու և կատարվածի համար զոջալու պարագայում: Մեղքի ընդունումը դիտում են որպես անչափահասի ուղղման հնարավորություն, այլ ոչ թե մեղավորության փաստի հաստատում: Եթե անչափահասը չի ընդունում իր մեղքը հանցանքը կատարելու մեջ, ապա կասկածի տակ է դրվում դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունը, քանի որ այս դեպքում անչափահասի համար կարող է պարզ չլինել, թե վերջինս ինչ պետք է ուղղի իր վարքագծում¹⁶:

Այս առնչությամբ, կարծում ենք, կարելի է գուգահեռներ անցկացնել մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի դադարեցման կարգի առնչությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների¹⁷ հետ, որոնց վերլուծությունից բխում է, որ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը թեև չի հավասարվում մեղադրական դատավճռին, որով հաստատվում է անձի մեղքը, սակայն նշված որոշմամբ առնվազն փաստվում է քրեական օրենքով արգելված արարքի կատարումը: Ուստի պատահական չէ, որ վերոշարադրյալ հիմքերից զատ, Նախագիծը իբրև քննարկվող ինստիտուտի կիրառման պայման նախատեսում է, որ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում են անչափահաս մեղադրյալը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Իսկ անչափահասի համաձայնությունը ենթադրում է իր կողմից կոնկրետ արարքը կատարած լինելու փաստի ընդունում: Իսկ թե արդյոք անձն իսկապես ընդունում է իր մեղքը և զոջացել է արարքի կատարման համար, պետք է պարզի վարույթն իրականացնող

¹⁵ Տե՛ս **Авалиани К. А.**, նշվ. աշխ., էջ 170-171:

¹⁶ Տե՛ս **Чувилев А.** Новые основания прекращения уголовного дела в отношении несовершеннолетнего // Законность, 1998, № 2, էջ 22, **Вуколов В. К.** Производство по делам несовершеннолетних. Ростов-на-Дону. 1982, էջ 63, **Косова С. А.** Прекращение уголовного дела в отношении несовершеннолетнего в связи с применением принудительных мер воспитательного воздействия: Дис. канд. юрид. наук. Омск, 2002, էջ 100-110, **Пустовая И. Н.** Прекращение уголовного дела в стадии предварительного расследования с освобождением лица от уголовной ответственности (ст. 6-9 УПК РСФСР): Автореф. дис. каид. юрид.наук. Челябинск, 2001, էջ 27, **Анферова О. А.** Проблемы прекращения уголовного дела (преследования) с применением к несовершеннолетним принудительных мер воспитательного воздействия: Дисс. канд. юрид. наук. Волгоград, 2003, էջ 90-91, **Авалиани К. А.**, նշվ. աշխ., էջ 170:

¹⁷ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ՇԴ/0012/11/13 որոշման 17-րդ կետը, 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՔԴ/0009/11/13 որոշման 19-րդ կետը:

մարմինը: Բնականաբար, սուկ ձևական համաձայնությունը մեղքը ընդունելու մասին հայտարարություններով, ինչպես նշվում է տեսության մեջ, կարող է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ անձի ուղղվելու հնարավորությունը կասկածի տակ դնող գործոն ծառայել:

Պեկինյան կանոնները ևս պահանջում են այս առնչությամբ անչափահասի և ծնողների կամ խնամակալի համաձայնությունը¹⁸: Անդրադառնալով քննարկվող պայմանին՝ պետք է փաստել, որ, տեսաբանների կարծիքով, այն կոչված է երաշխավորելու անչափահասի բարի անունն ու համբավը, բացառելու անչափահասին անհիմն և անօրինական քրեական պատասխանատվության ենթարկելը¹⁹: Քրեական հետապնդումը այս հիմքով դադարեցնելու անչափահասի համաձայնությունը ենթադրում է, որ վերջինս պարտավորություն է ստանձնում նոր հանցանք չկատարելու և պահպանելու իր նկատմամբ կիրառված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կանոնները: Մակայն ոչ միայն անչափահասի, այլ նաև օրինական ներկայացուցչի համաձայնությունը ստանալու պահանջը միանշանակ չի ընկալվում տեսաբանների կողմից, քանի որ մի կողմից՝ այն սահմանափակում է անչափահասի սեփական կարծիքն արտահայտելու ազատությունը, մյուս կողմից՝ ուղղված է բացառապես անչափահասի իրավունքների ապահովմանը, քանի որ չափահասի համար ավելի հեշտ է նշված գործողության էությունը հասկանալը և դրա հետևանքները գիտակցելը²⁰:

Կարծում ենք՝ օրինական ներկայացուցչի գրավոր առարկության բացակայությունը որպես այս ինստիտուտի կիրառման պայման նախատեսելը ընդհանուր առմամբ իրավաչափ է, սակայն, հաշվի առնելով, օրինակ, շահերի հնարավոր բախման կամ օրինական ներկայացուցչի ոչ բավարար իրավական գիտելիքների առկայության փաստը, կարծում ենք՝ այս դեպքում խնդրի լուծում կարող է լինել օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու կարգավորումների առկայությունը:

Քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ անչափահասի և օրինական ներկայացուցչի համաձայնությունը, ինչպես նշվում է տեսության մեջ, ենթադրում է քրեական գործի նյութերին ծանոթ լինելու անհրաժեշտությունը, ուստի առաջարկվում է քրեադատավարական օրենսդրության մեջ նախատեսել նախքան համաձայնություն տալը մեղադրյալի, ինչպես նաև պաշտպանի և օրինական ներկայացուցչի կողմից գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն, եթե դա չի

¹⁸ Տե՛ս Պեկինյան կանոնների 11.3-րդ կետը:

¹⁹ Տե՛ս **Кириллова Н. П.** Прекращение уголовного дела по реабилитирующим основаниям. СПб., 1998, էջ 10:

²⁰ Տե՛ս **Авалиани К. А.**, նշվ. աշխ., էջ 175:

հակասում անչափահասի շահերին²¹:

Նախագիծը սահմանում է միայն քրեական վարույթը կարճելու²² հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում քննիչի կողմից նախաքննության ավարտի մասին վարույթի մասնավոր մասնակիցներին գրավոր ծանուցելու, ինչպես նաև վարույթի նյութերին ծանոթանալու իրավունք ունեցող անձանց գրավոր խնդրանքով այդպիսիք ծանոթացման ներկայացնելու հնարավորություն (Նախագծի 202-րդ հոդվածի 1-2-րդ մասեր): Կարծում ենք՝ այս կարգավորման օրինակով նախքան անչափահասի կամ նրա օրինական ներկայացուցչի դիրքորոշումը ճշգրտելը վերջիններին, ինչպես նաև անչափահասի պաշտպանին պետք է վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորություն տրվի:

Ըստ էության իրավաչափ ենք համարում վարույթն իրականացնող մարմնի համար նման պարտականություն սահմանելը: Պարզապես կարծում ենք՝ առավել նպատակահարմար կլիներ նախքան նման համաձայնություն տալը համապատասխան պարզաբանումներ տրամադրելու պահանջ նախատեսելը:

Տեսության մեջ քննարկվել է նաև անչափահասի կամ նրա ներկայացուցչի կողմից համաձայնությունը հետ վերցնելու հնարավորության հարցը: Եվ այս առնչությամբ առկա է այն մտտեցումը, որ վերջիններս մինչև դատարանի՝ խորհրդակցական սենյակ հեռանալը կարող են հանդես գալ համաձայնությունը հետ վերցնելու միջնորդությամբ, ինչը ենթադրում է, որ գործի քննությունը շարունակվելու է²³:

Մենք, սակայն, համաձայն չենք այս դիրքորոշմանը, քանի որ այս ինստիտուտը կիրառելու և պետության կողմից համապատասխան դատավարական ռեսուրսներ վատնելու պայմանն ի սկզբանե անձի համաձայնությունն է, որը հետ վերցնելու հնարավորություն նախատեսելը կհանգեցնի մասնավոր շահի ոչ իրավաչափ առավելության: Ընդ որում, երբեմն նշված համաձայնությունը հետ վերցնելը կարող է նույնիսկ անչափահասի շահերից չբխել:

Նախագծի կարգավորումներից բխում է, որ այն տարանջատում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ և առանց նշված միջոցների կիրառման գործուն գոջալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու երկու տարբեր դատավարական մեխանիզմներ: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը պարզելը, թե ինչպես են միմյանց հետ հարաբերակցվում հայեցողական քրեական հետապնդման այս երկու մեխանիզմները: Տեսության մեջ քննարկվել է ոչ միայն գործուն գոջալու, այլ նաև տուժողի հետ

²¹ Տե՛ս **Николюк В. В., Дунин В. А.** Прекращение предварительного следствия с передачей уголовного дела в комиссию по делам несовершеннолетних. Учебное пособие. Омск: Издательство Омской высшей школы МВД СССР, 1983, էջ 43:

²² Նախագիծը տարանջատում է քրեական վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու ինստիտուտները:

²³ Տե՛ս **Авалиани К. А.**, նշվ. աշխ., էջ 177:

հաշտվելու դեպքում հայեցողական քրեական հետապնդման, այսպես կոչված, ընդհանուր տեսակի և այս կոնկրետ մեխանիզմի սահմանազատման հարցը: Եթե տուժողի հետ հաշտվելու հիմքով հայեցողական քրեական հետապնդման և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգերը, ինչպես իրավաչափորեն նշվում է տեսության մեջ, միմյանցից սահմանազատելը բարդություն չի ներկայացնում, ապա որոշակիորեն խնդրահարույց կարող է լինել իրավիճակը գործուն գոջալու դեպքում, երբ, օրինակ, անչափահասի կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա կամովին աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, չի վիճարկում իրեն մեղսագրվող փաստերը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Այս առնչությամբ դատավարագետների կարծիքները չեն համընկնում: Որոշ տեսաբաններ այն տեսակետն են պաշտպանում, որ միայն այն դեպքերում, երբ բացակայում են տուժողի հետ հաշտվելու կամ գործուն գոջալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը, կարող է քննարկվել անչափահասին դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը²⁴:

Հակառակ տեսակետի կողմնակիցները պնդում են, որ քրեական պատասխանատվությունից ազատելու փաստական և իրավական միատեսակ նախապայմանների առկայության դեպքում նախապատվությունը պետք է տալ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն՝ որպես անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով կիրառման ենթակա հատուկ նորմ:

Բացի այդ, նշված տեսակետը հիմնավորվում է նրանով, որ բավարար չէ միայն անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վերջինիս վերադաստիարակելու և վարքագծի նկատմամբ հսկողություն սահմանելու ուղղությամբ, համոզել անչափահասին, որ նրա կողմից կատարված թեկուզ և ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքը հանրությունը և պետությունը բացասական են գնահատում, և որ նա պետք է պատասխանատվություն կրի՝ դրանով իսկ կանխելով նոր հանցանքների կատարումը: Իսկ այլ հիմքերով քրեական հետապնդումը դադարեցնելիս անչափահասի նկատմամբ ներգործության որևէ միջոց չի կիրառվելու:

²⁴ St' u **Аликперов Х. Д.** Освобождение от уголовной ответственности несовершеннолетних // Законность. 1999, № 9, էջ 11, **Головко Л. В.** Классификация оснований освобождения от уголовной ответственности // Законность. 1998, № 11, էջ 37, **Анферова О. А.**, նշվ. աշխ., էջ 24-25, 29, **Чувилев А.** Новые основания прекращения уголовного дела в отношении несовершеннолетнего // Законность. 1998, № 2, էջ 22, **Косова С. А.**, նշվ. աշխ., էջ 64:

Ընդ որում, ներկայացնելով քրեական հետապնդումը դադարեցնելու այս եղանակի առավելությունները տեսության մեջ իբրև դրա առանձնահատկություններ նշվում է, որ

1) քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության մասին եզրահանգումը հիմնված է ոչ միայն անցյալում տեղի ունեցած և ներկա պահին առկա հանգամանքների վրա, այլ նաև ենթադրում է որոշակի կանխատեսումների անհրաժեշտություն,

2) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելը պայմանական է, քանի որ օրենքը մի շարք պարտադիր պահանջներ է ներկայացնում ապագայում անչափահասի վարքագծին, և դրանց խախտումը կարող է հանգեցնել համապատասխան միջոցների կիրառումը վերացնելուն և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելուն²⁵:

Կարծում ենք՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում խնդիրը նշված ինստիտուտներից որևէ մեկին արհեստականորեն նախապատվություն կամ առավելություն տալը չէ: Երկու դեպքում էլ քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորությունը գնահատելիս ըստ էության հաշվի են առնվելու նմանատիպ հանգամանքներ: Վարույթն իրականացնող մարմնի խնդիրը անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում վերջինիս կողմից կրկին ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկի աստիճանը գնահատելը և այն հնարավորինս զրոյացնելու համար լրացուցիչ դաստիարակչական միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը որոշելն է: Նման միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության դեպքում, բնականաբար, քրեական հետապնդումը պետք է դադարեցվի գործուն գոջալու հիմքով, ինչը թույլ կտա առհասարակ խուսափել որոշակի դատական քննությունից՝ առավել համահունչ լինելով միջազգային պահանջներին: Իսկ վարույթն իրականացնող մարմնի գնահատականը պետք է բխի գործի հանգամանքների և անչափահասի անձի, վերջինիս վարքագծի, շրջապատող միջավայրի վերաբերյալ փաստական տվյալների համակողմանի վերլուծությունից, որը պետք է արտացոլվի կոնկրետ դատավարական որոշման մեջ: Ուստի պատահական չէ, որ տեսության մեջ իրավաչափորեն ընդգծվում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու և անչափահաս մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Ընդ որում, հատուկ ուշադրություն է դարձվում որոշման նկարագրական-պատճառաբանական հատվածին, որում պետք է շարադրվեն դեպքի հանգամանքները, ապացույցները, որոնք հաստատում են անչափահասի մեղքը մեղսագրվող արարքի

²⁵ См. у Авалиани К. А., նշվ. աշխ., էջ 173-174:

կատարման մեջ, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք վկայում են այն մասին, որ անչափահասը կարող է ուղղվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Իսկ նշված դատավարական ակտի եզրափակիչ մասը պետք է պարունակի որոշում քրեական հետապնդումը դադարեցնելու, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելու, խափանման միջոցները կամ դատավարական հարկադրանքի այլ միջոցները վերացնելու, իրեղեն ապացույցները տնօրինելու, շահագրգիռ անձանց նշված որոշման մասին ծանուցելու, քաղաքացիական հայցն առանց քննության թողնելու և որոշումը բողոքարկելու դատավարական կարգի և ժամկետների մասին²⁶:

Ըստ էության, նույն մոտեցումն է որդեգրել Նախագիծը, որի 196-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համապատասխան որոշման մեջ շարադրվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը և հիմքը, անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու հիմքը, նախաքննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու իրավական հիմքերը և հիմնավորումները, կիրառված խափանման միջոցի վերացման, արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման հետ կապված հարցերը, ինչպես նաև որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

Ինչ վերաբերում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունը դատարանում քննելու կարգին, ապա այս առնչությամբ ևս տեսության մեջ մոտեցումները տարբեր են: Այսպես, Վ. Պ. Կաշեպովի կարծիքով, դատարանը պետք է միանձնյա կարգով ուսումնասիրի քրեական գործի նյութերը, գործով ձեռք բերված ապացույցները պետք է ամբողջ ծավալով հետազոտվեն, լսվեն դատավարության բոլոր մասնակիցների (դատախազ, տուժող, օրինական ներկայացուցիչ և պաշտպան) կարծիքները դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորության և դրանց կոնկրետ տեսակի մասին²⁷: Հակառակ տեսակետի կողմնակիցները գտնում են, որ դատարանում քննություն չպետք է իրականացվի, շահագրգիռ անձին դատարան չպետք է կանչեն, և դատարանը պետք է բավարարվի գործի նյութերին ծանոթանալով²⁸:

Ինչ վերաբերում է Նախագծի կարգավորումներին, ապա քննարկվող միջնորդության քննարկման կարգի առումով դրանք հղում են կա-

²⁶ Ст' у Вуколов В. К. Производство по делам несовершеннолетних. Ростов-на-Дону. 1982, էջ 64, Косова С. А., նշվ. աշխ., էջ 128, Авалиани К. А., նշվ. աշխ., էջ 179-180:

²⁷ Ст' у Кашепо В. П. Уголовная ответственность несовершеннолетних: Научно-практическое пособие. М.: Юридическая литература, 1999, էջ 145:

²⁸ Ст' у Николок В. В. Уголовный процесс по делам несовершеннолетних: Лекция. Омск: Юридический институт МВД России, 1998, էջ 45:

տարում խափանման միջոց կիրառելու վարույթի կարգին: Սակայն ուրոշ կարգավորումներ այս դեպքում կիրառելի չեն, ուստի իրավաչափ կլինեն սահմանել, որ համապատասխան կարգավորումները կիրառելի են վերաբերելի մասով: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, մեղադրյալի պարտադիր մասնակցության կանոնից բացառության դեպքերին (Նախագծի 287-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսպես, այդ հոդվածի համաձայն՝ «1. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ անցկացվում են դատալսումներ՝ կողմերի հավասարության և մրցակցության հիման վրա, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ²⁹:

(...)

3. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դատալսումներին մասնակցության իրավունք ունեն հսկող դատախազը, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանը և օրինական ներկայացուցիչը:

4. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու հարցի քննության դատական նիստը դռնբաց է (...):

5. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դատալսումներին առաջինը բացատրություն է տալիս մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը: Բացատրություն ներկայացնող կողմին հարցեր տալու իրավունք ունի հակառակ կողմը, ինչպես նաև դատավորը:

6. Կողմերը կարող են դատարանին ներկայացնել վարույթի առարկային վերաբերող լրացուցիչ նյութեր: Վերաբերելի չլինելու դեպքում դատարանը քննության չի առնում լրացուցիչ նյութերը, սակայն պարտավոր է կցել դրանք վարույթին: Վերաբերելի լինելու դեպքում հակառակ կողմին տրվում է լրացուցիչ նյութերին ծանոթանալու ողջամիտ հնարավորություն:

7. Խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարացնելու միջնորդությամբ դատալսումների կարգի նկատմամբ, վերաբերելի մասով (*mutatis mutandis*), կիրառվում են սույն օրենսգրքի 8-րդ բաժնի դրույթները:

8. Դատալսումներն ավարտելով՝ դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ որոշում կայացնելու»:

Այս կարգավորման առնչությամբ քննարկման կարիք ունի 7-րդ

²⁹ Նախագիծը սահմանում է, որ խափանման միջոց կիրառելու միջնորդության քննությանը մասնակցում են քննիչը և մեղադրյալը, կարող է մասնակցել նաև դատախազը: Կարծում ենք այս դեպքում պարտադիր մասնակցության պահանջ պետք է նախատեսվի դատախազի համար, իսկ քննիչը պետք է հնարավորության ունենա մասնակցելու դատալսումներին:

մասի նորմը, քանի որ դրանում վկայկոչվող 8-րդ բաժնի 268-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Բոլոր ապացույցները և վարույթի այլ նյութերը դատական նիստում ենթակա են անմիջական հետազոտման դատարանի և դատական վարույթի մասնակիցների կողմից*»: Այս առնչությամբ հարց է ծագում. արդյոք միջնորդության քննության ընթացքում քրեական գործով ձեռք բերված բոլոր ապացույցները ենթակա են անմիջական հետազոտման, թե՛ նշված պահանջը կիրառելի է միայն վարույթի այն նյութերի վրա, որոնք վերաբերում են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու եղանակով անչափահասին ուղղվելու հնարավորությունը գնահատելու հանգամանքներին: Կարծում ենք քրեական գործով ձեռք բերված բոլոր ապացույցները դատարանի կողմից անմիջականորեն հետազոտելու պահանջի նախատեսումը չի բխում դատավարական այս ինստիտուտի ներդրման միջազգային-իրավական փաստաթղթերով նախատեսված նպատակից, այն է՝ առանց պաշտոնական դատալուսման անչափահասի մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի հանգուցալուծումը: Կարծում ենք՝ այս դեպքում դատարանի խնդիրը ոչ թե անձին առաջադրված մեղադրանքի օրինականությունը և հիմնավորվածությունը գնահատելն է, այլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով՝ անձի ուղղվելու հավանականությունը որոշելը, ինչը ենթադրում է բացառապես դրան վերաբերող ապացույցների հետազոտման անհրաժեշտություն:

Նախագծի 416-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ դատարանը կարող է կայացնել կոնկրետ միջնորդությունը մերժելու կամ բավարարելու մասին որոշում: Սակայն Նախագիծը չի կարգավորում այն հարցը, թե ինչ որոշում պետք է կայացնի դատարանը, երբ, օրինակ, առկա է քրեական հետապնդումը առերևույթ բացառող Նախագծով նախատեսված այլ հանգամանք (օրինակ՝ վարույթը նախաձեռնվել է Օրենսգրքով չնախատեսված աղբյուրից ստացված տեղեկության հիման վրա, վարույթով քրեական հետապնդումն իրականացվել է հանրային կարգով, մինչդեռ Օրենսգրքի պահանջներին համապատասխան քրեական հետապնդումը պետք է իրականացվեր միայն մասնավոր կարգով, անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին կամ գտնվել է անմեղսունակության վիճակում, անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից (Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 8-10-րդ և 13-րդ կետեր) և այլն: Կամ զուգահեռներ անցկացնելով համաձայնեցման վարույթի հետ՝ պետք է վկայակոչել Նախագծի 461-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ «*Դատարանը չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և ընդհանուր կարգով շարունակում է նախնական դատալուսումները, եթե կողմերի բանակցությունների ըն-*

թացքում ծանոթանալով քրեական գործին՝ հանգել է հետևության, որ

1) մեղադրյալին մեղսագրվող արարքը ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ.

2) մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին»:

Կարծում ենք այս դեպքում ևս առկա է համանման կարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը: Ուստի առաջարկում ենք նախատեսել, որ վերը նշված հիմքերի, ինչպես նաև քրեական հետապնդումը առերևույթ բացառող հանգամանքների առկայության դեպքում դատարանը մերժում է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդությունը: Ինչ վերաբերում է վարույթի հետագա ճակատագրին, ապա այս դեպքում ևս կիրառելի է Նախագծի 416-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ միջնորդությունը մերժելու դեպքում դատարանը վերացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և վարույթի նյութերը վերադարձնում է դատախազին՝ քրեական հետապնդումը վերսկսելու համար: Իսկ քրեական հետապնդումը վերսկսելուց հետո վարույթն իրականացնող մարմինը պետք է կոնկրետ հանգամանքների գնահատմամբ համապատասխան հետևության հանգի: Ինչ վերաբերում է ինքնին դատարանի կողմից համապատասխան վերջնական դատավարական որոշման կայացմանը, ապա կարծում ենք՝ դա դուրս է այս ըստ էության հատուկ վարույթի սահմաններից:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ հայեցողական քրեական հետապնդումը որպես անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի հանգուցալուծման այլընտրանքային տարբերակ, համահունչ է միջազգային-իրավական հիմնական պահանջներին: Այս առնչությամբ գործող օրենսդրական կարգավորումներում առկա լուրջ բացը լրացվել է Նախագծի համապատասխան կարգավորումներում, որոնք ևս, սակայն, որոշակի լրամշակման և հստակեցման կարիք ունեն:

Բանալի բառեր – *անչափահաս, հայեցողական քրեական հետապնդում, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, դատարան, դատախազ, գործուն գղջալ*

ГАГИК КАЗИНЯН, ТАТЕВИК СУДЖЯН – Дискреционное уголовное преследование при производстве по делам несовершеннолетних. – Анализ международных требований в сфере ювенальной юстиции показывает, что они предполагают внедрить альтернативные методы расследования дел несовершеннолетних, включая дискреционное уголовное преследование, которое позволит несовершеннолетнему в максимальной степени избежать затягивания судебного разбирательства, исключив его возможное негативное влияние. В статье представлены нормы внутреннего законодательства, направленные на

реализацию указанных требований, т.е. особенности применения принудительных мер воспитательного характера, существующие пробелы в действующем УПК РА и проекте нового УПК, возможные пути их усовершенствования.

Ключевые слова: *несовершеннолетний, дискреционное уголовное преследование, принудительные меры воспитательного воздействия, суд, прокурор, деятельное раскаяние*

GAGIK GHAZNIYAN, TATEVIK SUJYAN – *Discretionary Criminal Prosecution in Juvenile Proceedings.* – An analysis of international juvenile justice requirements reveals the need to introduce alternative methods of solution of juvenile cases, including discretionary prosecution proceedings. The latter one will allow the juvenile to avoid undue trial as much as possible excluding also it's possible negative impact. The article presents the domestic legislative regulations aimed at the implementation of the mentioned requirements, that is, the peculiarities of the application of coercive measures of educational nature, the existing gaps in the RA Code of Criminal Procedure and draft new Code of Criminal Procedure, and the possible ways of their improvement.

Key words: *juvenile, discretionary criminal prosecution, coercive means of educational nature, court, prosecutor, active repentance*

Ներկայացվել է՝ 14.09.2020,
Գրախոսվել է՝ 22.09.2020,
Ընդունվել է տպագրության՝ 30.09.2020